



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ  
**ՀՐԱՄԱՆ**

N 708-Ա/2

09.06.2020թ

**ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԶՈՒԹԱԿԱՀԱՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության պատվերով իրականացվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Երաժշտարվեստի ոլորտի նախագծեր և միջոցառումներ» անվանակարգի մրցութային հանձնաժողովի 2020 թ. հունիսի 3-ի N 3 նիստի արձանագրության՝ Արամ Խաչատրյանի անվան ջութակահարների միջազգային մրցույթի առցանց կազմակերպումն ապահովելու նպատակով

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հաստատել Արամ Խաչատրյանի անվան ջութակահարների միջազգային մրցույթի առցանց կազմակերպման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար (տող՝ «Երաժշտական ստեղծագործական ծրագրեր և նախագծեր») Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված գումարներից հատկացնել 39000,0



Հավելված  
 ՀՀ կրթության, գիտության,  
 մշակույթի և սպորտի նախարարի  
 ----- 2020 թ.  
 N ----- հրամանի

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

Արամ Խաչատրյանի անվան ջութակահարների միջազգային մրցույթի առցանց  
 կազմակերպման

1	Կազմակերպության անվանում	Արամ Խաչատրյան-մրցույթ մշակութային հիմնադրամ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ք. Երևան, Սայաթ-Նովա 1ա, 0001
3	Ծրագրի անվանում	Խաչատրյանի անվան միջազգային 16-րդ մրցույթ
3.1	Բովանդակություն	<p>Խաչատրյանի միջազգային մրցույթն անցկացվում է Երևանում յուրաքանչյուր տարվա հունիսին: 2020 թվականին մրցույթն առաջին անգամ իրականացվում է առցանց հեռարձակմամբ՝ պայմանավորված նոր կորոնավիրուսային համավարակով պարտադրված սոցիալական հեռավորության պահանջներով: Առաջին անգամ մրցույթն իրականացվել է 2003 թվականին՝ մեծ կոմպոզիտորի 100-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների շրջանակներում:</p> <p>Այ տարի մրցույթը անց է կացվում ջութակ անվանակարգում և առցանց:</p> <p>Հաշվի առնելով կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը և համավարակի հետևանքով ամբողջ աշխարհում տեղաշարժի սահմանափակումները որոշում է կայացվել մրցույթն անցկացնել առցանց ձևաչափով: Մրցույթի ամբողջ ընթացքը՝ բացման և փակման համարգները, մրցութային փուլերը կհեռարձակվեն Խաչատրյանի անվան մրցույթի պաշտոնական կայքով <a href="http://khachaturian-competition.com">khachaturian-competition.com</a></p> <p>Նոր թվային ձևաչափը հնարավորություն կընձեռի մրցույթի</p>

		<p>մասնակիցներին և ժյուրիի անդամներին մասնակցելու և հանդիսատեսին հետևելու այն իրադարձությանը առցանց: Պատրաստվել է մրցույթի թվային մասնակցության ուղղույցը, մասնամասն ներկայացվում է այն քայլերը, որոնք երաժիշտները պետք է կատարեն մրցույթի հեռավար մասնակցության ընթացքում:</p> <p>Միջազգային մրցույթի ժյուրի նկատմամբ ՀՀ ժողովրդական արտիստ,</p> <p>Կոմիտասի անվան լարային քառյակի գեղարվեստական ղեկավար և առաջին ջութակ էդուարդ Թադևոսյանը: Ժյուրիի կազմում ընդգրկված են՝ Բոբ Լորդ (ԱՄՆ), Ջիանլուկա Մարչիանո Իտալիա, Ջոհրաբ Թադևոսյան Իսպանիա, Վերա Յու Վեիլինգ Չինաստան, Դորա Շվարցբերգ Իսրայել /ԱՄՆ, Պիտեր Չսաբա Ֆրանսիա /Ռումինիա,</p> <p>Խաչատրյանի անվան միջազգային առցանց մրցույթին մասնակցում են 16-32 տարեկան 19 ջութակահար:</p> <p>Համակարգված և նպատակասլաց աշխատանքի շնորհիվ Խաչատրյանի միջազգային մրցույթն ընդգրկվել է Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի (WFIMC) կազմում՝ մաս կազմելով մեծ և հեղինակավոր մի ընտանիքի, որին անդամակցում են աշխարհահռչակ մրցույթներ, ինչպիսիք են Չայկովսկու անվան մրցույթը (Ռուսաստան), Եղիսաբեթ թագուհու անվան մրցույթը (Բրյուսել), Մոնրեալի միջազգային մրցույթը և այլն:</p>
3.2	Նպատակ	<p>Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը, հետևելով ՀՀ ամրագրած մշակութային քաղաքականությանը՝ հանրահռչակում է հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները, մասնավորապես՝ Արամ Խաչատրյանի կոմպոզիտորական ժառանգությունը: Այս ամենամյա իրադարձությունը ևս մեկ հնարավորություն է Հայաստանի համար՝ աշխարհին ներկայանալու որպես մշակութային մեծ ներուժ ունեցող երկիր, այս տարի նաև որպես ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ իր տեսակի մեջ տվյալ պահին որպես միակ մրցույթն աշխարհում:</p> <p>Մրցույթի գլխավոր նպատակն է ի հայտ բերել նոր անուններ և Արամ Խաչատրյանի անունն առավել հայտնի դարձնել աշխարհում: Այն նաև հնարավորություն է ընձեռում մասնակիցներին՝ ծանոթանալու հայ կոմպոզիտորի ստեղծագործություններին՝ պարտադիր կերպով կատարելով դրանք մրցութային փուլերում:</p>
3.3	Անցկացման	Հունիսի 6-15, 2020

	Ժամկետ	
3.4	Անցկացման վայր	Առցանց տիրույթ
3.5	Ակնկալվող արդյունքներ	<p>Խաչատրյանի միջազգային մրցույթն ունի Հայաստանի մշակութային կյանքը երկրի սահմաններից դուրս հանրայնացնելու կարևոր առաքելություն: Մրցույթը նաև խոսում առիթ է՝ ցույց տալու համար, որ Հայաստանում մշակութային կյանքը պետական կարևորություն ունի, և ՀՀ կառավարությունը խրախուսում և աջակցում է միջազգային մասշտաբի միջոցառումների անցկացմանը Հայաստանում: Մրցույթն անցկացվում է արդեն 16-րդ անգամ: Անցած 16 տարիներին կատարված աշխատանքի արդյունքում շատ երկրներ սկսեցին ընդունել Հայաստանը, մասնավորապես Երևանը իբրև մշակութային մայրաքաղաք: Մրցույթի մասնակիցները մրցույթից հետո բազմաթիվ հաջողություններ են գրանցել միջազգային ասպարեզում, և Խաչատրյանի միջազգային մրցույթը ևս մի հարթակ է հանդիսացել նրանց կատարողական գործունեության հաջող ընթացքի համար:</p> <p>Երաժիշտներից շատերը մրցույթից հետո իրենց երկացանկում ընդգրկել են Արամ Խաչատրյանի կոնցերտները՝ նպաստելով հայ երաժշտարվեստի հանրահռչակմանը միջազգային ասպարեզում, իսկ կամերային ստեղծագործությունները ներառել են տարբեր համերգային ծրագրերում</p>
3.6	Ոչ ֆինասական ցուցանիշներ	<p>19 մասնակից 7 ժյուրիի անդամներ 10000-ից ավել առցանց դիտորդներ</p>